ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի թիվ 2 մանկապարտեզի շենքի վերանորոգման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/147 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/147 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի հուլիսի 1-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ Մեծամորի համայնքապետարանի և «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2026 թվականի հուլիսի 1-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է Պայմանագրի Հավելված 2-ով հաստատված «Վճարման ժամանակացույց»-ը՝ ըստ համաձայնագիր 1-ի Հավելված 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝ 2025 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/147 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ծառայության մատուցման ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության մատուցման ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.16 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**